

ԲԱԳՐԱՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՄԵԿ ԱՆԳԱՄ ԵՎՍ ԲԱՅԱՍԵՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Բայասեռի քերականական կարգը և ընդհանուր լեզվաբանության, և հայերենագիտության մեջ ամենատարբեր մեկնաբանությունների է արժանացել: Եվ դա հասկանալի է: Իրոք, բայասեռը որպես բայիմաստի յուրահատուկ դրսևորում, ուղղակիորեն կապված է նախադասության կառուցատիպի հետ, վճռորոշ դեր է կատարում սուբյեկտ-օբյեկտ փոխհարաբերության մեջ և, վերջին հաշվով, նախադասության առանցքն է, քանի որ առանց բայի ստորոգյալ չկա:

Անդրադառնալով հիմնականում հայերենագիտության մեջ գոյություն ունեցող տարակարծություններին: Մի կողմ թողնելով հարցի մանրամասն պատմությունը, որ մանրամասնորեն կարելի է գտնել և տարբեր մեծագրություններում, և տվյալ խնդրին վերաբերող բուհական ծեռնարկների համապատասխան բաժիններում, ինչպես նաև զանազան հոդվածներում, շարադրենք բայասեռի մեր ըմբռնումը արդի արևելահայերենի լեզվի նյութի հիման վրա:

Բայասեռ ասելով մենք հասկանում ենք գործողության և օբյեկտի փոխհարաբերությունը: Սուբյեկտի առկայությունը համարում ենք ինքնըստինքյան հասկանալի, քանի որ առանց նրա գործողությունը տեղի ունենալ չի կարող /բացառյալ բնության երևույթները/: Արդ, բայիմաստով արտահայտվող այն գործողությունը, որի իրականացման համար անհրաժեշտ է օբյեկտ, համարում ենք ներգործական սեռի բայ, իսկ այն գործողությունը, որի իրականացման համար օբյեկտ անհրաժեշտ չէ, համարում ենք չեզոք սեռի բայ:

Այսպիսով ունենք հակադրության երկու եզր, որոնք միմյանց բացառում են: Սրա շնորհիվ էլ առաջանում է բայասեռի կարգը: Հակադրության երրորդ եզր չկա, ուստի և երրորդ տեսակի բայասեռի դրսևորում արդի արևելահայերենում գոյություն չունի:

Մեր շարադրանքից պարզ երևում է, որ արդի հայերենի բայասեռի դրսևորումները մենք բխեցնում ենք ընդհանուր լեզվաբանության, ինչպես նաև շատ լեզուների գիտական քերականությունների մեջ ընդունված անցողականություն-անանցողականություն հակադրությունից: Իհարկե, հայերենագիտության մեջ ևս աչքաթող չի արված այս հակադրությունը: Սակայն այն դիտարկվում է ոչ թե որպես բայասեռի ուղղակի դրսևորում, այլ ավելի ընդհանուր երևույթ, իսկ բայասեռը նրանից ածանցյալ ինչ-որ բան: Այս առումով հիշատակենք մեր անվանի լեզվաբանների մոտեցումները:

Արդի արևելահայերենին վերաբերող մասնագիտական գրականության մեջ հաճախ իրոք հստակ չեն տարբերակվել ձևակազմական և բայական-

կան պլանները: Սրա ապացույցներից է հետևյալ մոտեցումը. «... «բարձրանալ», «մեծանալ» բայերը, ստանալով ցն ածանցը, փոխում են իրենց քերականական իմաստը և ձեռք են բերում ուղիղ խնդրի հետ միանալու շարահյուսական հատկություն»¹:

Բանն այն է, որ այս բայերի իմաստները փոխվում են, և դրա շնորհիվ էլ շարահյուսական նոր հատկություն են ձեռք բերում: Ցն ածանցը բայիմաստը, այսինքն բառիմաստն է փոխում, և ի դեմս բարձրագնել, մեծագնել բայերի մենք գործ ունենք նոր բառերի, ուստի և նոր քերականական հատկանիշների հետ:

Զարմանալի է, որ հայերենագետների զգալի մասը այնուամենայնիվ սեռի կարգը համարում է քերականական կարգ: Այս դեպքում պարզապես անհասկանալի է թվում «ածանց» տերմինը: Վերջին հաշվով ածանցը բառահարաբերակա՞ն ձևույթ է, թե բառակազմական: Եթե բայի սեռանշության դեպքում վ-ն, ցն-ն միայն սեռանիշ են, այդ դեպքում դրանց համար նոր, քերականական անուն է պետք գտնել, բանի որ դրանք ոչ մի կապ չպետք է ունենան բառիմաստի հետ: Մինչդեռ Մ. Աբեղյանը հստակ մատնանշում է գրաբարի քերականորեն, ձևաբանորեն զանազանվող սեռային հակադրությունը աշխարհաբարի բառակազմորեն տարբերվող սեռային հակադրությունից. «Գրաբարում առանձին կրավորական բայեր չկան...»: Աշխարհաբարում սակայն կրավորականի համար առանձին բայեր են կազմվել կրավորականի հատուկ վ ածանցով. և ինչպես «կարդալ» բայի դիմաց պատճառականը «կարդացնել» գատ բայ է, նույնպես և կրավորականը «կարդացվել» մի առանձին բայ է: Այս պատճառով և կրավորականներն իբրև առանձին բայեր դրել ենք անանցողական բայերի մեջ»²:

Ասածից պարզ երևում է, որ Մ. Աբեղյանը վ ածանցով բայերը բոլորովին էլ չի դիտարկում կրավորական կոչված պասիվ կառուցվածքի նախադասության մեջ, այլ ճշմարտացիորեն համարում է վ ածանցով կազմված նոր բայ, ուստի և ինքնուրույն, չեզոք սեռի բայ:

Այս ամենից հետո բոլորովին էլ համոզիչ չեն թվում Մ. Ասատրյանի հետևյալ դատողությունները. «Եվ որովհետև ներգործական ու համապատասխան կրավորական սեռի, ինչպես և չեզոք ու համապատասխան կրավորական սեռի, ինչպես և չեզոք ու համապատասխան ներգործական սեռի բայերը իրարից միայն քերականորեն են տարբերվում, ուստի այդ զույգերը ազատ կերպով կարելի է համարել նաև բառածևեր»³:

Նախ ի՞նչ քերականական կարգ առանց քերականական ձևույթի:

Երկրորդ ի՞նչ է նշանակում բառի ուղիղ ձևից բխող ածանցավոր նորակազմությունը նույն բառի բառածև համարել: Ո՞վ ասաց, որ սիրելը և սիրվելը ընդամենը անհասկանալի քերականական կարգով են միմյանցից տարբերվում, երբ իրականում ասում են «Երջանիկ է նա, ով սիրվում է, և ոչ թե նա, ով միայն սիրում է»: Արդ, հակադրվող անծանց միջև իմաստայի՞ն,

բառիմաստայի՝ն տարբերություն կա, թե՞ միայն քերականական-վերաբերական, այսինքն՝ բառածնային: Վերջին հաշվով՝ ո՞վ է երջանիկ ...

Մանուկ Աբեղյանը գործողության և օբյեկտի փոխհարաբերությունը մատնանշելիս արևելահայերենի բոլոր բայերը բաժանում է երկու տեսակի կամ սեռի՝ անցողական և անանցողական: Ինչպես տեսնում ենք, Աբեղյանի համար անցողականություն-անանցողականությունը և սեռը հոմանիշներ են⁴:

Աշոտ Աբրահամյանը անցողականություն-անանցողականությունը համարում է սեռադաս, այսինքն՝ ավելի լայն հասկացություն, և դրանից բխեցնում սեռերը՝ ներգործական, կրավորական, չեզոք, իսկ բացի սեռերից ընդունում նաև սեռային առում հասկացությունը: Այսպես՝ անցողական սեռադասի մեջ մտցնում է ներգործական սեռը և պատճառական սեռային առումը, իսկ անանցողական սեռադասի մեջ է մտցնում կրավորական, չեզոք սեռերը և միջին-անդրադարձ սեռային առումը⁵:

Էդուարդ Աղայանի մոտեցումը հետևյալն է. « ... անցողականություն ու անանցողականություն քերականական կարգը արտահայտում է գործողի ու գործողության առարկայի հարաբերությունը՝ բայի երկկողմանի հարաբերությամբ կամ դրա բացակայությամբ, մինչդեռ սեռերն արտահայտում են գործողի ու գործողության հարաբերություն:

... ամեն բայ ունի որևէ կարգի հարաբերություն գործողի հետ, և այս դեպքում ամեն բայի տվյալ իմաստը արտահայտում է որևէ սեռի քերականական իմաստ»⁶:

Այս մեջբերումից պարզ երևում է երկու բան. նախ՝ եղ. Աղայանը անցողականություն-անանցողականություն հակադրությունը բխեցնում է ոչ թե գործողություն – օբյեկտ փոխհարաբերությունից, այլ այստեղ նաև սուբյեկտը ներառնում է /«գործողի ու գործողության հարաբերություն»/, և երկրորդ՝ սեռի կարգը այս հակադրությունից չբխեցնելու համար շեշտը դնում է գործողի վրա և բայասեռի դրսևորում է համարում սուբյեկտի ու գործողության փոխհարաբերության դրսևորումը: Հավանաբար սա արվում է այն նպատակով, որ պասիվ կառույցի նախադասությունների կազմության մեջ ըստ ենթակայի ու գործողության փոխհարաբերության առանձնացվի կրավորական սեռ: Ինչևէ:

Գևորգ Ջահուկյանը բայասեռի քերականական կարգը բխեցնում է տիպարի կարգից՝ վերջինս բայասեռի համեմատությամբ համարելով ավելի լայն հասկացություն: Ըստ Գ. Ջահուկյանի՝ տիպարը լեզվաիմացական, իսկ սեռը հաղորդակցական պլանի դրսևորումներ են: Անցողականությունը մեկնաբանվում է որպես գործողայնություն, իսկ անանցողականությունը՝ վիճակայնություն: «Գործողային տիպարի դեպքում իրական աշխարհի երևույթների շղթայից տվյալ լեզվով խոսողներն առանձնացնում են մի օղակ /եղելություն/ բնութագրելով այն որպես պատճառահետևանքային հնարավոր հարաբերություն: Վիճակային տիպարի դեպքում այդ օղակը՝ եղելությունն առնչվում է ինքնակայորեն՝ անկախ այդ հարաբերությունից»⁷:

Գործողայնության և վիճակայնության ըմբռնումների հետ համամիտ լինելով հանդերձ՝ դժվարանում ենք անանցողականությունը դիտարկել որպես վիճակայնություն:

Անանցողականությունը գործողություն է, գործընթաց և ոչ թե վիճակ, գործողությունը ենթադրում է գործընթաց, փոփոխություն, վերջին հաշվով՝ դինամիկա, իսկ վիճակը, ընդհակառակը, ենթադրում է ստատիկա: Պարզապես անանցողական բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը տեղի ունենալու համար օբյեկտ անհրաժեշտ չէ, ենթական կատարում է բայիմաստով արտահայտված գործողությունն առանց օբյեկտի:

Այս ամենով հանդերձ՝ ավելի խոր վերլուծությունից պարզ է դառնում, որ Գ. Ջահուկյանի՝ բայաստեղի ըմբռնումը հենվում է հենց անցողականություն-անանցողականություն հակադրության վրա: Այսպես, «Անցնելով բովանդակության պլանին և օգտագործելով ավանդական անվանումները՝ կարելի է ասել, որ - /աց, ան/աց, չ և վ տարբերիչները անանցողականության, ն/ր, /ա, ե/ ցն/ր տարբերիչները՝ անցողականության արտահայտիչներ են: Սակայն այս անվանումները հենվում են շարահյուսական հարաբերությունների առաջնության վրա, շարահյուսական մակարդակից են գնում դեպի ձևաբանականը. նրանք նկատի ունեն տվյալ բայի մոտ ուղիղ խնդրի առկայությունը կամ բացակայությունը. այնինչ ձևաբանական մակարդակում մենք գործ ունենք ոչ թե հարաբերությունների, այլ հարաբերությունների հնարավորության՝ որպես հատկանիշների հետ, ուստի և ավելի ճիշտ կլիներ ընտրել բայիմաստի տիպարային տարբերությունները ավելի լավ բնորոշող անվանումներ»⁸: Դրանք հենց գործողայնությունն ու վիճակայնությունն են, որոնց մասին արդեն խոսեցինք:

Յուրահատուկ ըմբռնում ունի Ռաֆայել Իշխանյանը: Սի կողմից՝ «... անհնար է բայաստեղի կարգը որոշելիս մնալ մակարդակներից մեկում միայն, քանի որ ինքն այս կարգը երկմակարդակային է՝ ձևաբանական-շարահյուսական» /եջ 10/ ճշմարտացիորեն նկատում է հեղինակը, մյուս կողմից՝ ելակետ ընդունելով հանդերձ անցողականություն-անանցողականություն հակադրությունը՝ հեղինակը բայաստեղի կարգը սահմանելիս հաշվի է առնում միայն հակադրության մի եզրը՝ անցողականությունը, իսկ վերջինիս մեջ հիմք է ընդունում ներգործական-կրավորական հակադրություն կազմելու ձևաբանական հատկանիշը՝ ըստ վ-ի առկայության կամ բացակայության: Հասկանալի է, որ նման մոտեցումը ի սկզբանե դատապարտված պիտի լինի, քանի որ հակադրության մյուս եզրի անտեսումը չի կարող հանգեցնել ճշմարիտ եզրակացությունների:

Այստեղից է գալիս այն հետևությունը, թե անանցողական բայերը սեռանիշ չեն, այսինքն՝ դրանք ոչ թե չեզոք սեռի բայեր են, այլ բայաստեղի կարգի առումով են չեզոք, այլ կերպ ասած՝ անսեռ են⁹:

Այս եզրահանգումը պարզապես անհասկանալի է: Իհարկե, ինչպես ասացինք, հակադրության մի եզրի վրա հիմնված մոտեցումն է նման եզրա-

հանգման պատճառը: Սակայն անանցողական սեռի բայերը գործողություն են ցույց տալիս, իսկ գործողություն ցույց տվող բայերը չեն կարող սեռանիշ չլինել: Այլ է եղելություն ցույց տվող բայերի վիճակը: Նրանք հենց իրենց բայի-մաստով իրոք չեզոք են բայասեռի կարգի նկատմամբ, քանի որ գործողություն չեն ցույց տալիս:

Այննա չենք ուզում անդրադառնալ ասպարեզում գոյություն ունեցող մյուս տեսակետներին, քանի որ դրանք հիմնականում հանգում են վերը հիշատակածներին:

Այնուամենայնիվ, ի՞նչն է պատճառը, որ հայերենագիտության մեջ բացի անցողական և անանցողական կամ ներգործական և չեզոք սեռի բայերից ընդունված է առանձնացնել նաև կրավորական սեռը:

Նախ ասենք, որ արդի արևելահայերենում բայասեռի ձևաբանական ցուցիչ չկա ոչ ներգործական, ոչ չեզոք սեռի համար: Սա վերաբերում է անածանց բայերին: Այստեղից կարելի է եզրակացնել հետևյալը, քանի որ արդի արևելահայերենի անածանց բայերի կազմության մեջ չկա սեռանիշ բառահարաբերական ձևույթ, ուստի բայասեռը ձևաբանական կարգ չէ:

Ինչ վերաբերում է ածանցավոր բայերին, ապա, ինչպես արդեն ասացինք, դրանք արդեն այնպիսի բառեր են, որոնք ավելացած ածանցի շնորհիվ անպայմանորեն նոր իմաստ են ձեռք բերել ու հենց դրանով էլ տարբերվում են այն բայերից, որոնցից կազմվել են: Եթե այս երևույթը բացակայում է, ուրեմն ածանցի մասին խոսք չի եղել չի կարող:

Արդ, ժամանակակից արևելահայերենի բաղադրյալ բայերի կազմության մեջ առանձնացվող սեռանիշ ածանցներն են ան, ն, չ, վ, /ա, ե/ ցն/ր:

Սրանցից ան, ն և չ ածանցները, ինչպես Գ. Զահուկյանն է նշում, կերպասեռանիշ ածանցներ են: Սրանք չեզոք սեռի բայեր կազմող ածանցներ են:

Ինչ վերաբերում է վ-ին, ապա սա բազմիմաստ ձևույթ է:

Անդրադարձ և փոխադարձ իմաստներ ունեցող բայերի կազմության մեջ վ-ի բառակազմական այս բնորոշումները անվիճելի են /իսգնմել և ողջագուրվել տիպի բայերի դեպքում: Սակայն դրանք առանձին սեռեր կամ սեռային առումներ համարելը նշանակում է բայասեռի բնորոշման տրամաբանական ելակետը անցողականություն-անանցողականություն հակադրությունը, շփոթել ածանցի արտահայտած բառաստեղծական իմաստի հետ, որը ավելի նեղ հասկացություն է, քանի որ կոնկրետանում է տվյալ բառի զուտ հասկացական իմաստի մեջ:

Ասածից հետևում է, որ և անդրադարձության, և փոխադարձության իմաստ արտահայտող վ ածանց ունեցող բայերը ուղղակի չեզոք սեռի են, քանի որ անանցողական են:

Այս երկու դեպքում էլ վ-ին «կրավորական» անվանում տալը, կարծում ենք, ճշմարիտ չէ, քանի որ կրող կա միայն այն դեպքում, եթե կա ներգործող: Ոչ անդրադարձության իմաստի և ոչ էլ փոխադարձության դեպքում նման փոխա-

դաբերություն չկա, ուստի և «կրավորական» տերմինի գործածությունն այս երկու դեպքում էլ անտեղի է թվում:

Ստացվում է, որ այս երկու դեպքում էլ արդի արևելահայերենում վ-ն չեզոք սեռի ցուցիչ է բառակազմական-սեռանիշ ածանց համապատասխան բազմիմաստությամբ:

Սակայն արդի հայերենում կա բայերի մի խումբ, որոնց կազմության մեջ հանդես եկող վ-ն չի առանձնանում որպես բառակազմական ուրույն իմաստով հանդես եկող ձևույթ. ընակվել, զբառվել, մուռովել և այլն: Թերևս դա բացատրվի նրանց առաջացման ճանապարհով:

Մանվել Ասատրյանը դրանք բացատրում է գրաբարյան լծորդությունների փոփոխությամբ վ ածանցի առաջացման հետ կապված. օր.՝ հաշտիմ-հաշտվիմ-հաշտվեմ¹⁰: Այն, որ այս վ-ն բառակազմական թույլ դիրք ունի, երևում է նրանից, որ, նախ սրանց մի մասն ունի նաև առանց վ-ի ձևերը /օր.՝ համաձայնել – համաձայնվել և այլն/, և երկրորդ այս բայերից անցողական բայեր կազմելիս այն ընկնում է՝ առանց բառիմաստի փոփոխության. հաշտվել – հաշտեցնել:

Այսբանով հանդերձ որոշակի բառակազմական իմաստ չունեցող այս վ-ն, այնուամենայնիվ, մեկ ստույգ իմաստ ունի. չեզոք սեռի ցուցիչ է, սեռանիշ է:

Այժմ նախադասության պասիվ կառուցվածք առաջացնող վ-ի մասին: Հենց սկզբից ասենք, որ հայերենագիտության մեջ մինչև օրս ընդունված այսպես կոչված կրավորական սեռի ցուցիչ վ-ն համարվում է ածանց, և, ինչպես գիտենք, կրավորական սեռն էլ ձևաբանական կարգ:

Արդ, ինչպե՞ս կարող է բառակազմական արժեք ունեցող ածանցը առաջացնել ձևաբանական-քերականական կարգ:

Այս առիթով Գ. Ջահուկյանն ասում է. «Վ մասնիկի հակադարձ գործողություն արտահայտելը ցայտուն կերպով հանդես է գալիս գործողի մատնանշման դեպքում: Երբ գործողը չի նշվում, լեզվաիմացական ու լեզվա-հաղորդակցային պլանների հակադրությունը չեզոքանում է, և կրավորական – ոչ – կրավորական /ներգործական/ սեռային հակադրության փոխարեն հանդես է գալիս անանցողական – անցողական տիպարային հակադրությունը. այլ կերպ ասած վ-ն ստանում է տիպարային մասնիկի արժեք. հմտ. գլորեցի - գլորվեցի «1. մեկի կողմից գլորվեցի. 2. ինքս ինձ գլորվեցի»¹¹:

Գ. Ջահուկյանի մատնանշած երկրորդ իմաստը /գլորվեցի/ հենց վ ածանցի չեզոք սեռի դրսևորումն է, որտեղ վ-ն իրոք ունի նաև բառակազմական ածանցի արժեք:

Ինչ վերաբերում է վ-ի «հակադարձ գործողություն» արտահայտելուն, ապա դա անհրաժեշտ է ավելի մանրամասն դիտարկել:

Օրինակ «ես գլորեցի մեքենան» և «Մեքենան գլորվեց իմ կողմից»: Ունենք երկու նախադասություն, որոնք արտահայտում են նույն եղելությունը:

Տարբերությունն արտահայտման ձևի մեջ է, իսկ բովանդակությունը նույնն է: Բայասեռը բայիմաստով է արտահայտվում: Ինչպե՞ս կարող է նախադասությունների բովանդակությունը նույնը լինել, իսկ դրանց ստորոգյալները տարբեր սեռերի պատկանեն, և դրա պատճառը լինի «հակադարձ գործողություն արտահայտելը»: Այդ դեպքում նրանք բովանդակությամբ նույնպես պետք է տրամագծորեն հակառակ իմաստներն արտահայտեին: Մինչդեռ դրանք շարահյուսական հոմանիշներ են: Ըստ Մանվել Ասատրյանի՝ «Եթե ներգործական կառուցվածքի նախադասության մեջ առաջին գծի վրա է դրված սուբյեկտի իր իսկ հատկանիշի ստեղծման փաստը, որի իրականացման համար օբյեկտ է պահանջվում, ապա կրավորական կառուցվածքի նախադասության մեջ առաջին գծի վրա է մղված օբյեկտի հետ կատարված գործողության փաստը, իսկ թե այդ գործողությունն ով է կատարել, մղված է երկրորդական գծի վրա»¹²:

Այնուհետև. «Կրավորական կառուցվածքի այն նախադասությունը, որի մեջ առկա է ներգործող խնդիրը /տրամաբանական սուբյեկտը/, կոչվում է եռանդամ եռամոտակնան:

... Եռանդամ կրավորականի սակավ գործածությունը լեզուներում բխում է կրավորական կառուցվածքի նախադասության բուն էությունից, այն է իջեցնել գործողի որպես ռեալ տրամաբանական սուբյեկտի դերը, ցույց տալ օբյեկտի հետ կատարված որոշ գործողության փաստ՝ մեծ մասամբ անկախ գործողից: Միա այս է պատճառը, որ կրավորական սեռի բայերով կազմված նախադասությունների մեջ ներգործող խնդիրը՝ տրամաբանական սուբյեկտը, մեծ մասամբ չի հիշատակվում»¹³:

Վերը մենք համոզվեցինք, որ տրամաբանական սուբյեկտը չհիշատակելիս նախադասության ստորոգյալը չեզոք սեռի է /գլորվեցի/, հակառակ դեպքում «Չակորը վարսավիրանցում սափրվում է» նախադասության ենթական կարող է լինել սափրիչը կամ վարսավիրը: Իսկ եռանդամ կրավորական համարվող նախադասությունը որքանո՞վ է հայերեն: Կարծում ենք՝ սիրո խոստովանություն անելիս ոչ ոք չի ասի «Դու սիրվում ես իմ կողմից», այլ «Ես քեզ սիրում եմ»: Որքան էլ երկանդամ պասիվ նախադասությունները գերակշռում են եռանդամների համեմատությամբ, այնուամենայնիվ դրանք կիրառվում են արդի արևելահայերենում. թերևս վերը հիշատակված մեկնաբանությունը ճիշտ է:

Այսպիսով, արդի արևելահայերենին ոչ այնքան հարազատ նման նախադասությունը ներգործական կառուցվածք ունեցող նախադասության շրջուն տարբերակն է, նրանից է սերում, առաջնայինը, ելակետայինը ներգործական, ակտիվ կառույցն է:

Ընդհանուր լեզվաբանության մեջ ընդունված է լեզուները դասակարգել մաս ըստ նախադասության կառուցատիպերի: Չայոց լեզուն ունի նոմինատիվ կառուցվածք, այսինքն հայերենում ենթական դրվում է միայն ուղղական հոլովով: Թերևս սա է պատճառը, որ պասիվ կառուցվածքում ուղիղ

ձևով դրված իրական օբյեկտը համարվում է ձևական ենթակա, իսկ թեք ձևով դրված իրական ենթական համարվում է ներգործող խնդիր:

Նախ՝ նախադասության իրական, տրամաբանական անդամները պետք է քերականական անդամներին չհակադրվեն, այսինքն՝ ձևական և քերականական տրամաբանությունը միմյանց չպետք է հակասեն, այլ միայն լրացնեն: Այս առումով տրամաբանորեն ընկալելի չէ ոչ ներգործող խնդիրը, ոչ էլ ձևական ենթական: Ներգործող խնդիր անվանումը արդեն իսկ վկայում է, որ այս նախադասության մեջ ներգործում կա: Իսկ խնդիրը գործողության հետ այս կամ այն կերպ առնչվող օբյեկտն է, որը երբեք սուբյեկտ լինել չի կարող: Մյուս կողմից ներգործողն էլ երբեք օբյեկտ լինել չի կարող: Այնպես որ ներգործող նշանակում է ներգործական սեռի բայի հետ գործածվող սուբյեկտ, այսինքն՝ պասիվ կառուցվածքի նախադասության իրական ենթական թեք հոլովով է դրված միայն այն պատճառով, որ այն նոմինատիվ կառուցատիպի նախադասության շրջուն տարբերակն է, պասիվ կառուցվածքը: Ձևական ենթակա կոչվածը անցողական բայի իրական օբյեկտն է, որը հենց այդ անունն էլ պիտի կրի: Հակառակ դեպքում՝ ստացվում է, որ ձևը և բովանդակությունը կարող են հանդես գալ իրարից անկախ: Նախադասության մեջ բառի քերականական ձևավորումը պետք է համապատասխանի նրա տրամաբանական մեկնաբանությանը: Ինչպես որ բացառության կարգով ունենք բացառականով մասնակի ուղիղ խնդիր /հացից կերա/, այնպես էլ նախադասության շրջուն, պասիվ կառուցվածքի մեջ կա բացառականով կամ սեռական գումարած կողմից կապով յուրահատուկ ենթակա, որը միայն նախադասության պասիվ կառուցվածքին է հատուկ:

Ինչ վերաբերում է կոալովոտական տերմինին, ապա այն բոլորովին չի բնութագրում նախադասության պասիվ կառուցվածքը: Այս անվանման ելակետը հետադարձ գործողության անվանման հետևանք է: Մինչդեռ, ինչպես տեսանք, այս կառուցվածքի նախադասությունների մեջ ոչ մի հետադարձ գործողություն չկա, այլ կա միևնույն գործողությունը շարահյուսական հոմանիշով ներկայացնելու միտում: Բացի այդ, գործողությունը կրող կա միայն այն դեպքում, եթե կա ներգործող: Ի՞նչ անհրաժեշտություն կա նախադասության արտահայտած բովանդակությունը արտահայտել կրողի դիրքից և ոչ թե ներգործողի:

Ասածից հետևում է, որ պասիվ կառուցվածքի նախադասության բայը ներգործական սեռի է: Նախադասության այս կառույցն առաջանում է բայի կազմության մեջ վ-ի ներմուծումով, որը զուգակցվում է բացառական հոլովով կամ սեռական գումարած կողմից կապով ձևավորված իրական ենթակայով և ուղիղ ձևով արտահայտված օբյեկտով: Սակայն այս վ-ն արդեն բառակազմական ածանց չէ, քանի որ չի փոխում բայիմաստը, այլ նրա գործածությունը պայմանավորված է յուրահատուկ իրական ու քերականական ենթակայի առկայությամբ, որը շարահյուսական երևույթ է:

Գրաբարում ներգործական-չեզոք, ինչպես նաև նախադասության ակտիվ ու պասիվ կառուցվածքները ունեն ձևաբանական դրսևորում, քանի որ արտահայտվում են լծորդության փոփոխությամբ, իսկ արդի արևելահայերենում բայի սեռը ունի բաղադրյալ բայերի կազմության մեջ բառակազմական դրսևորում, պասիվ կառուցվածքի նախադասության մեջ շարահյուսական դրսևորում, այսինքն ներգործական սեռի բայ գումարած յուրահատուկ ենթակա:

Ինչ վերաբերում է պատճառական /ա, ե/ ցն/ր ածանցով կազմվող բայերին, ապա, անկասկած, դրանք ներգործական սեռի բայեր են: Այս դեպքում ևս պատճառական սեռ համարելիս բայի սեռային և բառակազմական իմաստները չեն զանազանվում: Նման բառիմաստ ունեցող լեզուներում սա առանձնացվում է որպես կառուցատիվ և երբեք չի նույնացվում ներգործական սեռի հետ, այլ համարվում է որոշակի բառիմաստ:

Արդի արևելահայերենում /ա, ե/ ցն/ր ածանցը նույնպես բազմիմաստ է: Այն կարող է հանդես գալ բուն պատճառական իմաստով, այսինքն ստիպել մեկին ինչ-որ գործողություն կատարել /վազեցնել/, կարող է նաև այդպիսի իմաստ բնավ չարտահայտել /փակցնել, կորցնել և այլն/: Թերևս ճշմարիտ է այն կարծիքը, ըստ որի պատճառականի /ա, ե/ ցն/ր ածանցը իրոք թույլ է: Նրան օգնության է գալիս սա բայով հարադիր կազմությունը /գրել տալ և այլն/, լվ ածանցի հետ հանդիպելիս վերջինս չեզոքացնում է և պատճառական ածանցի, և նրա միջոցով արտահայտվող ներգործականի իմաստը. հազնել – հազցնել – հազցվել:

Այսպիսով, մեր կարծիքով, արդի արևելահայերենում բայասեռը շարահյուսաբանական կամ շարահյուսաբանագիտական կարգ է, քանի որ ձևաբանական ցուցիչ չունի և նախադասության մեջ դրսևորվում է բայիմաստով՝ ըստ գործողության և օբյեկտի փոխհարաբերության, իսկ բառային մակարդակում՝ պատճառական և վ բազմիմաստ ածանցներով:

¹ Մ. Սատրյան, Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Ե., 1959 թ., էջ 65, նաև էջ 70:

² Աշխարհաբարի շարահիսուսին, Վաղարշապատ, 1912 թ., էջ 23:

³ Բայի սեռերը, էջ 83:

⁴ Աշխարհաբարի շարահիսուսին, Վաղարշապատ, 1912 թ., էջ 19:

⁵ Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962 թ., էջ 517:

⁶ Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967 թ., էջ 322:

⁷ Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974 թ., էջ 256-264:

⁸ Հիմունքներ, էջ 260:

⁹ Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971 թ., էջ 152-165:

¹⁰ Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1983 թ., էջ 220:

¹¹ Հիմունքներ, էջ 271:

¹² Ժամանակակից հայոց լեզու, էջ 212:

¹³ Ժամանակակից հայոց լեզու, էջ 213: